ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-22/6

ք.Երևան 30 Հոկտեմբերի 2022թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Է. Գևորգյանի, որը գործում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից և ԱՇՈՏ ԱԼԼԱԽՎԵՐԴՅԱՆ Ա/Ձ-ն, ի դեմս տնօրեն Ա. Ալլախվերդյանի (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ ՊԵԿ Հարավային մաքսատուն-վարչության Մեղրիի մաքսային կետ-բաժնի տարածքում ընթացիկ նորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները իրականացվում՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի ,Էլեկտրոնային գնումներե բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի ,Օրենսդրությունե բաժնի ,Ֆինանսների նախարարի հրամաններե ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված

վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **17 450 000 (Տասնյոթ միլիոն չորս հարյուր հիսուն հազար)** ՀՀ դրամ: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի հավելված N 3 վճարման ժամանակացույցով նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային

օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում

կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի ,Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներե բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 17 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	ԱՇՈՏ ԱԼԼԱԽՎԵՐԴՅԱՆ Ա/Ձ
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7	ՀՀ, Արարատի մարզ,
ՀՀ ֆինանսների նախարարության	գ.Եղեգնավան,Ֆիդայու փ. տ.44
աշխատակազմի գործառնական վարչություն	ԱԿԲԱ բանկ ԦԲԸ
Հ/Հ 900011054013	Հ/Հ 220399803950000
ՀՎՀՀ 02647057	ՀՎՀՀ 47944132
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝	ԱՇՈՏ ԱԼԼԱԽՎԵՐԴՅԱՆ Ա/Ձ-ի տնօրեն՝
Է.Գևորգյան	Ա. Ալլախվերդյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

30 հոկտեմբերի Հավելված թիվ 1
2022թ. կնքված
ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-22/6 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*
ՀՀ ՊԵԿ Հարավային մաքսատուն-վարչության Մեղրիի մաքսային կետ-բաժնի տարածքում
ընթացիկ նորոգման աշխատանքների
CPV-45461100/1

Հ.հ.	Աշխատանքի անվանումը	Չափ միավորը	Ծավալը	Միավորի արժեքը /ՀՀ դրամ/	Ընդհանուր /ՀՀ դրամ/
1	2	3	4	5	6
1	Ասֆալտաբետոնե շերտի քանդում 11 սմ հաստ.	քմ	4.0	549	2196
2	Խճի շերտի իրականացում 10 սմ հաստ.	քմ	4.0	1026	4104
3	Հատակի բետոնացում B12.5 բետոնով	խմ	0.4	34350	13740
4	Ցեմ/ավազային հարթեցնող շերտի իրականացում 30մմ հաստության, M150 մակնիշի շաղախով	քմ	4.0	1539	6156
5	Հատակի իրականացում չսահող խեցեսալիկներով	քմ	4.0	8023	32092
6	Հատակի մաշված գորգածածկույթի/кавролин/ քանդում	քմ	53.5	172	9202
7	Շրիշակների ապամոնտաժում	գծմ	35.0	227	7945
8	Հատակի գորգածածկույթի /кавролин/ փոխարինում	քմ	53.5	2578	137923
9	Շրիշակների իրականացում	գծմ	35.0	1185	41475
10	Արտաքին պատերի բարելավված ներկում ճակատային ներկով ամբողջական մածիկապատումով և երկշերտ ներկումով	քմ	306.0	1884	576504
11	Արտաքին պատերի ներկման ժամանակ օգտագործվող մեխանիզմներ	ժամ	24.0	8778	210672
12	Մետաղապլաստե վիտրաժներից տաղավարի իրականացում /չբացվող մաս/	քմ	15.36	37589	577367
13	Մետաղապլաստե վիտրաժներից տաղավարի իրականացում /բացվող մաս/	քմ	2.24	60430	135363
14	Տանիքի ծածքի իրականացում ցինկապատ գունավոր փոշեներկված КП-25-0.50 մմ պրոֆիլավոր թիթեղով	քմ	6.25	9832	61450
15	Ջերմամեկուսացում հանքային բամբակով	քմ	4.0	1340	5360
16	Պլաստիկ կախովի առաստաղի իրականացում,մետաղական պրոֆիլի վրա	քմ	4.0	5275	21100
17	Առաստաղի ներկառուցվող լուսատու (կետային) 4 Վտ, LED, 600 Լմ, 3600 Կ, 115x115 մմ ՍԱՆՎ~220 Վ, cosφ=0.92	հատ	1.0	10529	10529
18	Հաղորդալար պղնձե, բազմաջիղ, վինիլային մեկուսացումով և վինիլային թաղանթով, կտրվածքը՝ 2x1.5 քմմ	գծմ	50.0	368	18400
19	Միաստեղ միաբևեռ անջատիչ, արտաքին տեղադրման	հատ	1.0	1327	1327
20	Երկբևեռ վարդակ, երրորդ հողանցման հպակով, արտաքին տեղադրման, ԻԱՆՎ=16Ա	հատ	1.0	2210	2210

21	Զննման մասնաշենքի մուտքի մետաղապլաստե դռան ապամոնտաժում	քմ	3.1	1426	4421
22	Զննման մասնաշենքի մուտքի մետաղապլաստե դռան տեղադրում	քմ	3.1	57667	178768
23	Դռների ինքնուրույն փակման սարք / շվեյցար /	հատ	1.0	15920	15920
24	Հայաստանի Հանրապետության դրոշի համար պատին ամրացվող բռնիչների պատրաստում և տեղադրում ներառյալ դրոշը	հատ	2.0	41127	82254
25	Տարածքի արտաքին լուսավորության վերանորոգման աշխատանքների ժամանակ օգտագործվող մեխանիզմներ	ժամ	4.0	8778	35112
26	Արտաքին սանհանգույցների պատերի լավորակկ սվաղում ցեմենտ-ավազե ծաղախով հախճասալիկների տակ	քմ	28.8	2062	59386
27	Պատերի երեսապատում հախճասալիկներով սոսնձի վրա 1.5 մ բարձրությամբ	քմ	18.3	9795	179249
28	Ասիական զուգարանակոնքի փոխարինում լվացող տակառիկի հետ միասին	հատ	2.0	14778	29556
29	Ցեմ/ավազային հարթեցնող շերտի իրականացում 30մմ հաստության, M150 մակնիշի շաղախով	քմ	5.4	1539	8311
30	Հատակի իրականացում չսահող խեցեսալիկներով	քմ	5.4	8023	43324
31	Հախճապակե լվացարանի փոխարինում,ներառյալ սիֆոնը	հատ	2.0	15109	30218
32	Լվացարանի ծորակ	հատ	2.0	6818	13636
33	Պլաստիկ կախովի առաստաղի իրականացում,մետաղական պրոֆիլի վրա	քմ	5.4	5275	28485
34	Պոլիպրոպիլենե խողովակ Φ20x3,4	գծմ	18	3151	56718
35	Պոլիպրոպիլենային խողովակների ձևավոր մասերի արժեքը d=20-32մմ	հատ	12.0	226	2712
36	պոլիպրոպիլենային փական d=20մմ	հատ	4.0	4235	16940
37	Առաստաղի ներկառուցվող լուսատու (կետային) 4 Վտ, LED, 600 Լմ, 3600 Կ, 115x115 մմ ՍԱՆՎ~220 Վ, cosφ=0.92	հատ	4.0	20810	83240
38	Հաղորդալար պղնձե, բազմաջիղ, վինիլային մեկուսացումով և վինիլային թաղանթով, կտրվածքը՝ 2x1.5 քմմ ШВВП	գծմ	60.0	368	22080
39	Միաստեղ միաբևեռ անջատիչ, արտաքին տեղադրման	հատ	2.0	1327	2654
40	Երկբևեռ վարդակ, երրորդ հողանցման հպակով, արտաքին տեղադրման, ԻԱՆՎ=16Ա	հատ	2.0	2210	4420
41	Սանհանգույցի արտաքին դռան փոխարինում մետաղապլաստե խուլ դռնով	քմ	3.36	57667	193761
42	Արտաքին ջրագծի համար խրամուղու իրականացում՝ III կարգի գրունտի մշակում էկսկավատորով 1 մ խորությամբ	խմ	15	743	11145
43	Ավազի նախապատրաստական շերտի	խմ	1.5	7896	11844

	իրականացում δ=10սմ				
44	Ավազի պաշտպանիչ շերտի իրականացում δ=d+20սմ	խմ	3.0	6901	20703
45	III կարգի գրունտի ետլիծք բուլդոզերով	խմ	10.5	1300	13650
46	Մուտքի հատվածում գտնվող քարե շինության փայտե պատուհանների և դռների ապամոնտաժում	քմ	7.14	1426	10182
47	Մետաղապլաստե սպիտակ 60 մմ հաստ ապակեփաթեթով 4+4 մմ պատուհանների տեղադրում	քմ	3.2	47539	152125
48	Մետաղապլաստե լիցքով, սպիտսկ, 60մմ հաստությամբ, 4 խցիկով արտաքին խուլ դռների տեղադրում	քմ	3.94	57667	227208
49	Դռների ինքնուրույն փակման սարք / շվեյցար /	հատ	2.0	15920	31840
50	Վարչական շենքում ուղևորների թվով 4 սպասասրահների լուսատուների փոխարինում Led լամպերով երկար, արտաքին, նեյտրալ գույնի, 100Վտ 220Վ, 1200x75x25մմ	հատ	32.0	17656	564992
51	Ջրի պոռիպրոպիլենային D=20 մմ փականների փոխարինում	հատ	30.0	4235	127050
52	Վարչական շենքի ուղևորների համար նախատեսված սանհանգույցների լվացարանների ծորակների փոխարինում	հատ	7.0	8036	56252
53	Մուտքի մետաղական դարպասի ապամոնտաժում	քմ	60.0	1426	85560
54	Երեք տեղանոց նստարան 3000x800մմ	հատ	38	112462	4273556
55	Շերտավոր վարագույրի փոխարինում	քմ	6.3	15920	100296
56	Վարչական շենքին հարակից մետաղական թվով 6 դարպասների ապամոնտաժում	քմ	52.4	1426	74722
57	Արտաքին ջրամատակարարման D= 63 մմ պողպատե խողովակի փոխարինում D= 63 մմ պոլիպրոպիլենային խողովակով	գծմ	48.0	9890	474720
58	IV կարգի գրունտի մշակում խրամուղում ձեռքով կողալիցքով	խմ	24.0	4489	107736
59	Ավազի նախապատրաստական շերտի իրականացում δ=10սմ	խմ	2.4	7896	18950
60	Ավազի պաշտպանիչ շերտի իրականացում δ=d+20սմ	խմ	4.8	6901	33125
61	IV կարգի գրունտի ետլիծք ձեռքով	խմ	16.8	1536	25805
62	IV կարգի գրունտի մշակում փոսորակում ձեռքով կողալիցքով կոյուղու հորի համար	խմ	20.0	791	15820
63	IV կարգի գրունտի մշակում խրամուղում էկսկավատորով կողալիցքով	խմ	20.0	791	15820
64	Պոլիվինիլքլորիդեն կոյուղու խողովակ ռետինե սեղմիչ օղակներով, de160	գծմ	40.0	3276	131040
65	Պոլիվինիլքլորիդեն կոյուղու խողովակ ռետինե սեղմիչ օղակներով, de160 ձևավոր մասեր	հատ	6.0	1781	10686
66	Ավազի նախապատրաստական շերտի իրականացում δ=10սմ	խմ	2.0	7896	15792
67	Ավազի պաշտպանիչ շերտի իրականացում δ=d+20սմ	խմ	4.0	7571	30284
68	IV կարգի գրունտի ետլիծք ձեռքով	խմ	14.0	1536	21504
	Վարչական շենքին հարակից թվով 6				

	դարպասների և մուտքի դարպասի նորոգում				
69	IV կարգի գրունտի մշակում ձեռքով	խմ	3.96	8514	33715
70	Դարպասների սյուների բետոնացում B15 դասի բետոնով	խմ	3.96	46244	183126
71	Մետաղական դարպասների նորոգում	տն	2.045	8940	18282
72	պողպատե D= 100 մմ խողովակի արժեքը	գծմ	55.0	7802	429110
73	պողպատե Խողովակ 50x50x4 մմ արժեքը	գծմ	158.0	3621	572118
74	պողպատե խողովակ 20x20x2 մմ արժեքը	գծմ	373.0	748	279004
75	Պողպատե 3 մմ հաստությամբ թիթեղի արժեքը	քմ	6.26	18166	113719
76	պողպատե ծխնիների արժեքը	հատ	45	5307	238815
77	Կախովի կողպեկի արժեքը	հատ	8.0	5970	47760
78	Դարպասների վրա ավտոմատ առանցքային բացվող մեխանիզմի տեղադրում	կոմպլ	6.0	597004	3582024
79	d=8.3 մմ պողպատե ճոպանի արժեքը	գծմ	40.0	662	26480
80	Պղնձե մալուխ 2x4 մմ2	գծմ	445.0	609	270968
81	Մալուխի սակառ /короб/ 40x40 մմ	գծմ	245.0	774	189630
82	Վինեպլաստե ճկախողովակների տեղադրում	գծմ	200.0	242	48400
83	63 Ամպեր հզորությամբ ապահովիչի տեղադրում	հատ	6.0	4121	24726
84	Ապահովիչի տուփ	հատ	1.0	2653	2653
85	Մետաղական կոնստրուկցիաների երկշերտ ներկում հակակորոզիոն ներկով	տն	2.045	47149	96420
86	Մետաղական ցանկապատի երկշերտ ներկում հակակորոզիոն ներկով	քմ	80.0	975	78000
	Ընդամենը				**15 863 636**
	Շահույթ 10 %				**1 586 364**
	Ընդամենը				**17 450 000**

*Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ Սյունիքի մարզ, Մեղրիի համայնք գ.Կարճևան, Մայրուղի **4** հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

Է.Գևորգյան

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
ԱՇՈՏ ԱԼԼԱԽՎԵՐԴՅԱՆ Ա/Ձ
ՀՀ, Արարատի մարզ,
գ.Եղեգնավան,Ֆիդայու փ. տ.44
ԱԿԲԱ բանկե ՓԲԸ
Հ/Հ 220399803950000
ՀՎՀՀ 47944132
ԱՇՈՏ ԱԼԼԱԽՎԵՐԴՅԱՆ Ա/Ձ-ի տնօրեն՝

Ա. Ալլախվերդյան

(ստորագրություն)

Կ.Տ

30 Հոկտեմբերի Հավելված թիվ 2
2022թ. կնքված
ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-22/6 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ՀՀ ՊԵԿ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՄԱՔՍԱՏՈՒՆ-ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԵՂՐԻԻ ՄԱՔՍԱՅԻՆ ԿԵՏ-ԲԱԺՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	ՀՀ ՊԵԿ Հարավային մաքսատուն-վարչության Մեղրիի մաքսային կետ-բաժնի տարածքում ընթացիկ նորոգման աշխատանքներ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	30 օրացուցային օր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

Է.Գևորգյան

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
ԱՇՈՏ ԱԼԼԱԽՎԵՐԴՅԱՆ Ա/Ձ
ՀՀ, Արարատի մարզ,
գ.Եղեգնավան,Ֆիդայու փ. տ.44
ԱԿԲԱ բանկե ՓԲԸ
Հ/Հ 220399803950000
ՀՎՀՀ 47944132
ԱՇՈՏ ԱԼԼԱԽՎԵՐԴՅԱՆ Ա/Ձ-ի տնօրեն՝

Ա. Ալլախվերդյան

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3
30 Հոկտեմբերի 2022 թ. կնքված
ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-22/6 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

	Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը*	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2022թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում											
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	4251	45461100/1	ՀՀ ՊԵԿ Հարավային մաքսատուն-վարչության Մեղրիի մաքսային կետ-բաժնի տարածքում ընթացիկ նորոգման աշխատանքներ											17 450 000	17 450 000	**17 450 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	ԱՇՈՏ ԱԼԼԱԽՎԵՐԴՅԱՆ Ա/Ձ
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7	ՀՀ, Արարատի մարզ,
ՀՀ ֆինանսների նախարարության	գ.Եղեգնավան,Ֆիդայու փ. տ.44
աշխատակազմի գործառնական վարչություն	ԱԿԲԱ բանկե ՓԲԸ
Հ/Հ 900011054013	Հ/Հ 220399803950000
ՀՎՀՀ 02647057	ՀՎՀՀ 47944132
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝	ԱՇՈՏ ԱԼԼԱԽՎԵՐԴՅԱՆ Ա/Ձ-ի տնօրեն՝
Է.Գևորգյան	Ա. Ալլախվերդյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

«30» Հոկտեմբերի 2022 թ. Հավելված թիվ 4 կնքված
ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-22/6 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«30» Հոկտեմբերի 2022թ. կնքված
ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-22/6 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն